

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2018թ.

N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետության պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով և հիմք ընդունելով Արամ Մանուկյանի հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթողի նախագծի բաց մրցույթի մրցութային հանձնաժողովի նախագահ, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Տ.Բարսեղյանի գրությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն հայ նշանավոր պետական, քաղաքական և ռազմական գործիչ Արամ Մանուկյանի հիշատակը հավերժացնելու նպատակով նրա հուշարձանը Երևան քաղաքի Արամի և Նալբանդյան փողոցների խաչմերուկին հարող տարածքում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այս տարի լրանում է Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման **100**-ամյակը և հաշվի առնելով Արամ Մանուկյանի հայոց պետականության գործում ներդրած նշանակալի ավանդի ու ծավալած գործունեությունը, առաջարկվում է Երևան քաղաքի Արամի և Նալբանդյան փողոցների խաչմերուկին հարող տարածքում տեղադրել Արամ Մանուկյանի հուշարձանը:

Արամ Մանուկյանը (Սարգիս Հովհաննիսյան) ծնվել է **1879** թվականին, Ջեյմայում (ներկայիս՝ Սյունիքի մարզ, գյուղ Դավիթ Բեկ): Իր հայրենասիրական գործունեությունը սկսել է դեռևս **1902** թվականից, երբ Կարսից զենք, զինամթերք և կամավորական խմբեր է փոխադրել Արևմտյան Հայաստան: **1904** թվականից գործել է Վանում, դարձել Վասպուրականի հայության ամենաճանաչված գործիչներից մեկը: Եղել է **1915**թ. Վանի ինքնապաշտպանության (ապրիլ-մայիս) կազմակերպիչներից ու ղեկավարներից, որի հաղթական ավարտից հետո ռուսական հրամանատարությունը նրան նշանակել է Վասպուրականի նահանգապետ (նահանգապետությունը գոյատևել է **70** օր): Ռուսական զորքերի անակնկալ նահանջից հետո կազմակերպել է Վասպուրականի հայության գաղթը Արևելյան Հայաստան:

1916-17թթ. Ա. Մանուկյանը լինելով, Թիֆլիսի Ազգային բյուրոյի անդամ. զբաղվել է հիմնականում արևմտահայ գաղթականության հարցերով: Մեծապես նպաստել է **1917**թ. մայիսի **2-11**-ը Երևանում Արևմտահայերի **1**-ին համագումարի կազմակերպմանը: **1917**թ., որպես Հայոց ազգային խորհրդի լիազոր-ներկայացուցիչ, Թիֆլիսից ժամանել է Երևան, և գլխավորել լայն լիազորություններով օժտված նորաստեղծ ազգային Հատուկ կոմիտեն: Նա բազմաթիվ կոչերով և ուղերձներով դիմել է հայ ժողովրդին՝ կազմակերպված պայքար մղելու, սեփական ուժերին վստահելու, թուրքական հարձակումներից երկրի պաշտպանությունը նախապատրաստելու համար:

Նրա ջանքերով նույն տարում ստեղծվել է կառավարության դեր կատարող կառավարման վարիչների մարմինը, որը ղեկավարել է նա:

Արամ Մանուկյանը Սարդարապատի և Բաշ Ապարանի մարտերի (**1918**թ., մայիս) ժամանակ ապահովել է հայկական բանակի թիկունքի անվտանգությունը: **1918**թ. մայիսի **28**-ին Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո առանցքային դեր է խաղացել, մինչև Թիֆլիսում ստեղծված Հայաստանի կառավարության ժամանումը Երևան (հուլիսի **23**-ին), իսկ նորաստեղծ կառավարությունում ղեկավարել ներքին գործերի նախարարությունը, որի իրավասության տակ էին նաև լուսավորության, հաղորդակցության, պարենավորման ու խնամատարության ոլորտները, տեղական իշխանությունների ձևավորումը: Արամ Մանուկյանի դերը մեծ է հանրապետությունում պարենային ճգնաժամը մեղմելու, գրագրությունների լեզուն հայացնելու, հարյուրհազարավոր փախստականների և որբերի կացությունը հնարավորինս բարելավելու գործում: Նրա անմիջական մասնակցությամբ երկիրը ձեռքագատվել է հայոց պետականության նկատմամբ թշնամաբար տրամադրված տարրերից:

Արամ Մանուկյանը մահացել է **1919** թվականին:

Երևանի քաղաքապետարանի կողմից **2017**թ. հունիսի **19**-ին հայտարարվել է Արամ Մանուկյանի հիշատակը հավերժացնող հուշարձանի նախագծի բաց մրցույթը, որի արդյունքում մրցութային հանձնաժողովը **2017**թ. սեպտեմբերի **25**-ին կայացած նիստում հաղթող է ճանաչել ՀՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Դավիթ Մինասյանի հեղինակած գործը, որն էլ ներկայացված է ավագանու հաստատմանը՝ Երևան քաղաքի Արամի և Նալբանդյան փողոցների խաչմերուկին հարող տարածքում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ